**Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ**
**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց**

**12 ապրիլի 2012 թվականի N 14**

---

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻ-ՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման համակարգի ներդրման ժամանակացույցին (այսուհետ՝ ժամանակացույց)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ կազմակերպել Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման համակարգի ներդրման գործընթացի իրականացումը՝ համաձայն սույն որոշմամբ հաստատված ժամանակացույցի:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարներին իրականացնել քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման համակարգի ներդրման գործընթացը՝ համաձայն սույն որոշմամբ հաստատված ժամանակացույցի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 23
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
ապրիլի 12-ի նիստի N 14
արձանագրային որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

| N/N ը/կ | ՀՀ քաղաքային համայնքները | Համակարգի ներդրման ժամկետը | |
|---|---|---|---|
| 1. | Երևան | *Ճարտարապետահա-տակագծային առաջադրանքի տրամադրում* | *Շինարարության (քանդման) թույլտվության տրամադրում, ավարտված շինարարության շահա-գործման փաստագրում* |
| | | 2012 թ. ապրիլի 30 | 2012 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2. | Աշտարակ | 2013 - 2014 թթ. | |
| | Ապարան, Թալին | 2013 - 2015 թթ. | |
| 3. | Արտաշատ | 2013 - 2014 թթ. | |
| | Արարատ, Վեդի, Մասիս | 2013 - 2015 թթ. | |
| 4. | Արմավիր | 2013 - 2014 թթ. | |
| | Էջմիածին | 2013 - 2015 թթ. | |
| 5. | Գավառ, Մարտունի | 2013 - 2014 թթ. | |
| | Սևան, Վարդենիս | 2014 - 2015 թթ. | |
| 6. | Հրազդան, Աբովյան, Ծաղկաձոր | 2013 - 2014 թթ. | |
| | Եղվարդ, Չարենցավան | 2014 - 2015 թթ. | |
| 7. | Վանաձոր | 2012 - 2013 թթ. | |
| | Ալավերդի, Ստեփանավան | 2013 - 2014 թթ. | |
| | Սպիտակ, Տաշիր | 2014 - 2015 թթ. | |
| 8. | Գյումրի | 2012 - 2013 թթ. | |
| | Արթիկ, Մարալիկ | 2013 - 2015 թթ. | |
| 9. | Կապան | 2013 - 2014 թթ. | |
| | Գորիս, Սիսիան, Քաջարան, Տաթև | 2014 - 2015 թթ. | |
| 10. | Իջևան | 2013 - 2014 թթ. | |
| | Դիլիջան, Նոյեմբերյան | 2014 - 2015 թթ. | |
| 11. | Եղեգնաձոր, Ջերմուկ | 2013 - 2014 թթ. | |
| | Վայք | 2013 - 2015 թթ. | |
| 12. | Այլ քաղաքային համայնքներ | 2014 - 2016 թթ. | |